



## ՏԵՂԵԿԱՆՔ

02.04.2017թ. Ազգային ժողովի ընտրությունների ընթացքում և հետո «ԱՆԿԱԽ ԴԻՏՈՐԴ» հասարակական դաշինքի իրավաբանական խմբի կողմից իրականացված գործողությունների վերաբերյալ




ԱՆԿԱԽ ԴԻՏՈՐԴ

*Independent observer*



«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքը, հիմնված Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, Իրազեկ քաղաքացիների միավորում, Մարտունու կանանց համայնքային խորհուրդ և Գորիսի մամուլի ակումբ հասարակական կազմակերպությունների կողմից, իրականացրել է 2017թ. ապրիլի 2-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզարշավի և քվեարկության օրվա դիտարկում: Դիտարկումն իրականացվել է Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության, Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի, Բաց հասարակության հիմնադրամներ Հայաստանի, Սիգրիդ Բոգինգ Թրասթ հիմնադրամի, Հայաստանում Չեխիայի դեսպանության, Նորվեգիայի Հելսինկյան Կոմիտեի, ֆինանսական աջակցությամբ: Սույն զեկույցով ներկայացվում է քվեարկության օրը Դաշինքի իրավաբանական խմբի կողմից ստացված ահազանգերի առնչությամբ իրականացված գործողությունները առ ապրիլի 12, 2017թ.:

Զեկույցում ներկայացված տեսակետները որևէ ձևով չեն արտահայտում ֆինանսավորող կազմակերպությունների պաշտոնական տեսակետները:



### **Բովանդակություն**

|   |    |
|---|----|
| Գրավոր փաստաթղթերի բովանդակությունը, պատասխանատու մարմինները և ընթացքը .....      | 6  |
| Հանցագործության մասին հաղորդումներ .....  | 9  |
| Բողոքներ / առաջարկություններ Տեղամասային ընտրական հանձնաժողովներին և ԿԸՀ-ին ..... | 12 |
| Հայցադիմում ՀՀ վարչական դատարան .....   | 14 |
| Ամփոփում .....  | 15 |

## Ընդհանուր տեղեկություններ

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի կողմից 02.04.2017թ.-ի ընտրությունների ընթացքում դիտորդներին և Դաշինքի անդամ կազմակերպություններին իրավաբանական աջակցություն էին ցուցաբերում 27 իրավաբաններ:

Քվեարկության օրը դիտորդների կողմից գրանցվել է շուրջ 3058 խախտման վերաբերյալ ահազանգ, որոնցից 205 դեպքով դիտորդները ահազանգել են իրավաբանական խմբին:

Դիտորդներից ստացված 205 ահազանգերի կապակցությամբ իրավաբանները դիտորդներին տրամադրել են բանավոր խորհրդատվություն, կազմել անհրաժեշտ գրավոր փաստաթղթեր՝ դիմումներ, բողոքներ, առաջարկություններ և հանցագործության վերաբերյալ հաղորդումներ:

Ըստ այդմ՝ ահազանգերը կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

- ✓ Ջանգեր, որոնք հետապնդել են խորհրդատվական նպատակ (այս կամ այն նորմի մեկնաբանություն, օրենքով սահմանված կարգ, իրավիճակի լուծում և այլն).
- ✓ Ընտրական ընթացակարգի հետ կապված խախտումների վերաբերյալ ահազանգեր, որոնք դիտորդը չի կարողացել լուծել ինքնուրույն.
- ✓ Դիտորդի իրավունքների խախտումներ.
- ✓ Ակնհայտորեն հանցագործության հատկանիշներ պարունակող տեղեկություններ:

Այն դեպքերում, երբ խնդիրը վերաբերել է խորհրդատվության կամ ընթացակարգային և (կամ) դիտորդի իրավունքների խախտմանը, իրավաբանները փորձել են գտնել արագ արձագանքման մեխանիզմ և խնդիրները վերացնել՝ լուծել տեղում, ինչին հնարավոր է եղել հասնել օրենքով սահմանված կարգի վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելով, հանձնաժողովի նախագահի հետ հեռախոսազրույցի միջոցով, մի քանի դեպքով տարածքային ընտրական հանձնաժողովներին և ոստիկանության թեժ գծին ահազանգելով:

Իսկ երբ Դիտորդների կողմից բարձրացված խնդիրը վերաբերել է հանցագործության վերաբերյալ տեղեկություններին, և դրանց վերաբերյալ առկա են եղել որոշակի վերաբերելի ապացույցներ, կազմվել են հանցագործության մասին հաղորդումներ և ներկայացվել ՀՀ ոստիկանություն, ՀՀ գլխավոր դատախազություն, ինչպես նաև հրապարակվել են ՀՔԱ Վանաձորի գրասենյակի [www.hcav.am](http://www.hcav.am) կայքում:

Այն ահազանգերը, որոնք վերաբերել են տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունների, անգործության կամ որոշման իրավաչափությանը, և դրանք հնարավոր չի եղել լուծել ահազանգի, խորհրդատվության կամ այլ միջոցով՝ իրավասու ընտրական հանձնաժողովին է ներկայացվել դիմում, բողոք կամ առաջարկություն (Մանրամասն տես աղյուսակներում):

Աղյուսակ 1. Ընդհանուր քանակական տվյալներ

|    |   | Քանակը |
|----|---|--------|
| 1. | Դիտորդների կողմից արձանագրված խախտումների թիվը՝ ըստ դիտարկման քարտերի     | 3058   |
| 2. | Իրավաբանական թիմին կատարված ահազանգերի ընդհանուր թիվը                     | 205    |
| 3. | Խորհրդատվությամբ կամ հեռախոսազանգով լուծված խնդիրների ընդհանուր թիվը      | 188    |
| 4. | Կազմված փաստաթղթի նախագծերի ընդհանուր թիվը                                | 45     |
|    | Գրավոր փաստաթղթի նախագիծ կազմելու ընթացքում խնդիրը                        | 29     |
| 5. | լուծվել է հեռախոսազանգերի, խորհրդատվության կամ բանակցությունների միջոցով. |        |
| 6. | Ուղարկված գրավոր փաստաթղթեր   | 16     |
| 7. | Գրավոր գործերից շարունակվում են   | 16     |

Աղյուսակ 2. Գրավոր փաստաթղթերի ներկայացման տվյալներ

|    | Գրավոր փաստաթղթի տիպը                            | Քանակը    | Պատասխանատու մարմինը               |
|----|--|-----------|------------------------------------|
| 1. | Հանցագործության մասին հաղորդումներ               | 11        | Դատախազություն, ոստիկանություն     |
| 2. | Վարչական բողոք                                   | 2         | Տարածքային ընտրական հանձնաժողովներ |
| 3. | Առաջարկություն                                   | 3         | ԿԸՀ և տարածքային հանձնաժողով       |
| 4. | Հայցադիմում (վարչական բողոքի շարունակությունն է) | 1         | ՀՀ վարչական դատարան                |
|    | <b>Ընդամենը</b>                                  | <b>17</b> |                                    |


Վերը բերված աղյուսակներից հետևում է, որ քվեարկության օրը իրավաբանների կողմից կազմվել են դիմումների, բողոքների, առաջարկությունների և հանցագործության մասին հաղորդումների նախագծեր շուրջ 45 դեպքով՝ ներառյալ ուղարկվածները (16 գործ):

29 դեպքով (45-16=29) չի ուղարկվել, քանի որ դիտորդների կողմից բարձրացված խնդիրները լուծում են ստացել նախագիծը կազմելու ընթացքում՝ հեռախոսազանգի, կամ խորհրդատվության արդյունքում: Հանցագործության մասին հաղորդումների նախագծերից չորսը չի ուղարկվել, քանի որ դրանցից երեքում առերևույթ բացակայել են հանցագործության հատկանիշները՝ մեկով առկա չի եղել վերաբերելի ապացույց:

## Գրավոր փաստաթղթերի բովանդակությունը, պատասխանատու մարմինները և ընթացքը


|   | Հակիրճ բովանդակությունը   | Ում է հասցեագրվել  | Ընթացքը     |
|---|---|--|-------------|
| <b>Հանցագործության մասին հաղորդումներ</b> |   |  |             |
| 1   | Քվեաթերթիկներում առկա են գծանշումներ. թիվ 16/15, 04/53, 27/16 տեղամասեր   | ՀՀ դատախազություն  | Ընթացքում է |
| 2   | Ուղղորդում, անգործություն, բաց քվեարկություն, ծեծ, սպառնալիք. թիվ 21/28 տեղամաս   | ՀՀ դատախազություն, ոստիկանություն                        | Ընթացքում է |
| 3   | Բաց քվեարկություն. թիվ 05/06 տեղամաս  | ՀՀ դատախազություն, ոստիկանություն                        | Ընթացքում է |
| 4.  | Բաց քվեարկություն. թիվ 03/10, 03/19 տեղամասեր   | ՀՀ դատախազություն, ոստիկանություն                        | Ընթացքում է |
| 5   | Կուտակումներ և անգործություն. թիվ 25/02 տեղամաս   | ՀՀ դատախազություն, ոստիկանություն                        | Ընթացքում է |
| 6   | Ուղղորդում, ընտրողի արտահայտման խոչընդոտ. թիվ 20/53 տեղամաս   | ՀՀ զինվորական դատախազություն, Զինվորական քննչական կոմիտե | Ընթացքում է |
| 7.  | Արգելվել է Հասարակական դիտորդական խմբի մուտքը քրեակատարողական հիմնարկներ  | ՀՀ դատախազություն, ՀՀ ԱՆ                                 | Ընթացքում է |
| 8   | Ընտրողների ուղղորդում գրանցված դիտորդի կողմից   | ՀՀ դատախազություն  | Ընթացքում է |
| 9.  | Տեխնիկական սարքավորման միջոցով տպված տեղեկանքի չտրամադրելը. թիվ 21/05 տեղամաս   | ՀՀ դատախազություն, ոստիկանություն                        | Ընթացքում է |
| 10  | Թվով 104 անվավեր քվեաթերթիկների վրա քվեատուփ գցելու պահին առկա չեն եղել ծրարի կտրվածքից դրված դրոշմանիշներ: նախագահի և համաձայնությամբ հանձնաժողովի անդամների դրանք | ՀՀ դատախազություն  | Ընթացքում է |

|                          |   |     |                  |  |
|--------------------------|---|-----|------------------|--|
|                          | քվեաթերթիկների վրա դրվել են հաշվարկի ընթացքում և ճանաչվել վավեր. թիվ 14/20 տեղամաս  |     |                  |  |
| 11                       | Արձանագրության տվյալները անհայտ անձի կողմից փոխել.  | ՀՀ  | դատախազություն   | Ընթացքում է  |
| <b>Վարչական բողոքներ</b> |   |     |                  |  |
| 1                        | Դիտորդի գնահատականը չի արձանագրվել տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանում. թիվ 14/10 տեղամասային հանձնաժողով  | Թիվ | 14               | 07.04.2017թ. թիվ 7-Ա բողոքում մերժվել է բողոքը. կվիճարկվի դատական կարգով   |
| 2                        | Դիտորդի գնահատականը չի արձանագրվել տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանում. թիվ 28/20 տեղամասային հանձնաժողով  | Թիվ | 28               | Ընթացքում է  |
| <b>Առաջարկություններ</b> |   |     |                  |  |
| 1                        | Թիվ 22/34 տեղամասում առկա կուտակումները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին.  | Թիվ | 22               | 07.04.2017թ. որոշմամբ վարչական վարույթ հարուցելը մերժվել է (Կվիճարկվի դատական կարգով)  |
| 2                        | Թիվ 29/45 տեղամասում որպես դիտորդ է մասնակցում համայնքի ղեկավարը, ով կարող է ազդեցություն ունենալ ընտրողների ազատ կամքի արտահայտմանը և կաշկանդել նրանց  | Թիվ | 29               | Ընթացքում է  |
| 3                        | Տարբեր տեղամասերում արձանագրվել է, որ քվեաթերթիկների վրա առկա են տպագրական գծանշումներ, որոնք վտանգում են ընտրության գաղտնիությունը: Առաջարկվում է ստուգել բոլոր տեղամասերը և առկայության դեպքում փոխել քվեաթերթիկները: | ԿԸՀ |                  | Իրավական մեխանիզմի և այլ միջոցների բացակայության պայմաններում ԿԸՀ-ն չի արձագանքել:<br><br>ԿԸՀ-ի պատասխանը այլևս որևէ արժեք չի ներկայացնում |
| <b>Հայցադիմում</b>       |   |     |                  |  |
| 1                        | Թիվ 14/10 տեղամասային հանձնաժողովի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և թիվ 14 տարածքային հանձնաժողովի 07.04.2017թ. թիվ 7-Ա   | ՀՀ  | վարչական դատարան | Ընթացքում է  |



| որոշումը անվավեր ճանաչելու պահանջ: |  |  |
|------------------------------------|--|--|
| 2                                  | <p>4 գործով կազմվում է հայցադիմում, որոնցով ընդհանուր հայցային վարույթի շրջանակներում կվիճարկվի ընտրական հանձնաժողովների կողմից Կազմակերպությանը պատշաճ պատասխան չտրամադրելու հետ կապված գործողությունները (անգործությունը):</p> | <p>ՀՀ վարչական Ընթացքում է դատարան</p> |





## Հանցագործության մասին հաղորդումներ

1. Քվեաթերթիկներում առկա են գծանշումներ.

ՀՀ Արմավիրի մարզի թիվ 16/15 տեղամասում կազմակերպության դիտորդը արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետական կուսակցության քվեաթերթիկի ձախ ներքևի անկյունում առկա է գծանշում, նման գծանշում առկա չէ մյուս կուսակցությունների քվեաթերթիկների վրա, որը էականորեն տարբերվում է մյուսներից: Այդ նշանի միջոցով կարող է խախտվել ընտրության գաղտնիության սկզբունքը:

Այնուհետև, ի լրումն նախորդ հանցագործության մասին հաղորդման, տեղեկություն է ներկայացվել նաև թիվ 04/53 տեղամասում «Հայկական Վերածնունդ» կուսակցության քվեաթերթիկների և թիվ 27/16 տեղամասում «Հայկական Վերածնունդ» և «Հայաստանի Հանրապետական» կուսակցությունների քվեաթերթիկների վրա ևս տարբերվող գծանշումներ առկա լինելու վերաբերյալ:

2 Ուղղորդում, ոստիկանության անգործություն, բաց քվեարկություն, ծեծ, սպառնալիք

Կազմակերպության դիտորդը 2017 թվականի ապրիլի 2-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Զոլաքար համայնքի թիվ 21/28 տեղամասում դիտորդական առաքելություն իրականացնելիս հայտնաբերել է, որ նույն համայնքի գյուղապետը ուղղորդում է ընտրողներին, իսկ ընտրատեղամաս ժամանած ոստիկանները գյուղապետի ցուցումով դրսևորել են անգործություն: Դիտորդը արձանագրել է նաև, որ ընթանում է բաց քվեարկություն, ծեծել և դուրս են հանել վստահված անձի, ինչպես նաև սպառնացել են իրեն: Կազմակերպության Դիտորդը տեսանկարահանել է վերոնշյալ խախտումների ողջ ընթացքը:

3. Բաց քվեարկություն


Կազմակերպության դիտորդը 2017 թվականի ապրիլի 2-ին ՀՀ Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի թիվ 05/06 տեղամասում դիտորդական առաքելություն իրականացնելու ժամանակ հայտնաբերել է քվեարկության գաղտնիության խախտում: Նշված խախտումը հիմնավորվում է դիտորդի կողմից կատարված լուսանկարներով:

4. Բաց քվեարկություն

Կազմակերպության դիտորդը 2017թ. ապրիլի 2-ին ՀՀ Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի թիվ 03/19 տեղամասում դիտորդական առաքելություն իրականացնելիս հայտնաբերել է քվեարկության գաղտնիության պահպանման խախտման դեպք, մասնավորապես՝ ընտրողը քվեարկության խցիկում ընտրելիս լուսանկարել է իր քվեաթերթիկը:

Կազմակերպության մեկ այլ դիտորդ ՀՀ Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի թիվ 03/10 տեղամասում դիտորդական առաքելություն իրականացնելիս նկատել է ընտրողների կողմից քվեաթերթիկը ծրարի մեջ քվեարկության խցիկից դուրս տեղավորելու մի շարք դեպքեր, որոնք տեսաձայնագրվել են տեղամասում գտնվող տեսախցիկների միջոցով:

5. Կուտակումներ և ոստիկանության անգործություն.



2017 թվականի ապրիլի 2-ին ՀՀ Լոռու մարզի Տաշիր քաղաքի թիվ 25/02 ընտրատարածքի դիտորդ Տիրայր Մխիթարյանը հայտնել է, որ ժամը 11:00-ից սկսած՝ տեղամասի ներսում՝ քվեարկության սենյակում և ընտրական տեղամասին հարող տարածքում 50մ շառավղով անընդհատ տեղի են ունենում ընտրողների կուտակումներ, որը խաթարում է քվեարկության բնականոն ընթացքը: Վերոնշյալի վերաբերյալ դիտորդը տեղեկացրել է հանձնաժողովի նախագահին՝ խնդրի լուծման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու հարցով, սակայն հանձնաժողովի նախագահը չի կարողացել վերացնել վերոնշյալ խնդիրը: Միաժամանակ խնդրի վերաբերյալ Կազմակերպությունն ահազանգել է ՀՀ ոստիկանության թեժ գիծ (010-54-69-12):

Ժամը 13:30-ի սահմաններում թիվ 25/02 ընտրատարածքի դիտորդ Տիրայր Մխիթարյանը հայտնել է, որ ՀՀ ոստիկանության թեժ գիծ ահազանգելուց հետո խնդիրը որոշ ժամանակով վերացվել է, սակայն ժամը 13:30-ի դրությամբ իրավիճակը փաստացի նույն է եղել: Կազմակերպությունը կրկին ահազանգել է ՀՀ ոստիկանության թեժ գծի հեռախոսահամարին, որից հետո, սակայն, թիվ 25/02 ընտրատարածքում ընտրողների կուտակումները շարունակվել են, և խնդիրը շարունակվել է մնալ չկարգավորված:

6. Ուղղորդում, ընտրողի ազատ կամքի արտահայտման խոչընդոտ

Կազմակերպության դիտորդը 2017 թվականի ապրիլի 2-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի թիվ 20/53 տեղամասում դիտորդական առաքելություն իրականացնելու ժամանակ հայտնաբերել է, որ անհայտ անձը մի խումբ զինվորական ծառայողների ուղեկցել է քվեարկության սենյակ: Տվյալ անհայտ անձը ամբողջ ընթացքում գտնվել է տեղամասում և տեղամասի շրջակայքում: Դիտորդը պահանջել է տեղամասային հանձնաժողովի նախագահին՝ վերոնշյալի մասին արձանագրել տեղամասի գրանցամատյանում: Այնուհետև ոստիկանների միջոցով երեք անգամ դուրս է հրավիրել տեղամասից:


Անհայտ անձը անհասկանալի նշումներ է կատարել իր գրառումների մատյանում: Իսկ որոշ ժամանակ անց նույն տեղամաս է եկել զինվորական համազգեստով մեկ այլ անձ, որը նույնպես կատարել է գրառումներ և բարձրաձայն անվանակոչել է զինվորական ծառայողներին:

7. Դիտորդական խմբի մուտքի խոչընդոտում՝ քրեակատարողական հիմնարկ

2017թ.-ի ապրիլի 2-ին ՀՀ ԱՆ ՔԿ հիմնարկներում և մարմիններում հասարակական դիտորդական խմբի ներկայացուցիչների կողմից հաղորդագրություն է տարածվել հետևյալ բովանդակությամբ<sup>1</sup>. «Այսօր՝ ժամը 11:00-ին, «Նուբարաշեն» և 12:35-ին՝ «Կենտրոն» քրեակատարողական հիմնարկներում խոչընդոտել են «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ աշխատակից Արման Սահակյանին և «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ աշխատակից Հասմիկ Հարությունյանին՝ կատարելու իրենց դիտորդական աշխատանքը, ովքեր հանդիսանում են ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամներ»:

Նշվածի վերաբերյալ կազմակերպությունը ներկայացրել է հանցագործության վերաբերյալ հաղորդում:

<sup>1</sup> Arman Sahakyan поделился публикацией New Generation Humanitarian NGO. [http://ngngo.net/am/elections\\_observers\\_am/](http://ngngo.net/am/elections_observers_am/)



8. Ընտրողների ուղղորդում գրանցված դիտորդի կողմից

Կազմակերպության դիտորդը Էրեբունու 12-րդ դպրոցի 10/10 ընտրատեղամասում դիտորդական առաքելություն իրականացնելիս հայտնաբերել է, որ «Ընտրությունը քոնն է» ՀԿ-ի դիտորդը 2 անգամ բացահայտ ուղղորդել է ընտրողներին, որ ընտրեն 6-րդ համարին: Այնուհետև «Ելք» դաշինքի ներկայացուցիչը նկատել է վերը նշված խախտումը, դիմել է հանձնաժողովի նախագահին և գրանցամատյանում կատարել գրառում: Սակայն այդ դիտորդը, տեղեկանալով, որ բացահայտվել է իր կատարած անօրինական գործողությունը, անմիջապես փախուստի է դիմել: Որոշ ժամանակ անց «Ընտրությունը քոնն է» ՀԿ-ի դիտորդը հայտնվել է 10/9 ընտրատեղամասում և այնտեղ շարունակել քաղաքացիներին ուղղորդել, որ քվեարկեն 6-րդ համարին:

9. Տեխնիկական սարքավորման միջոցով տպված տեղեկանքի չտրամադրելը

Կազմակերպության դիտորդները 2017 թվականի ապրիլի 2-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի թիվ 21/05 և Գյումրիի 31/49 տեղամասերում դիտորդական առաքելություն իրականացնելու ժամանակ արձանագրել են, որ հանձնաժողովի նախագահը տեխնիկական սարքավորման միջոցով տպված տեղեկանքը իրենց չի տրամադրում: Դիտորդները պահանջել են տեղամասային հանձնաժողովի նախագահից՝ վերոնշյալի մասին արձանագրել տեղամասի գրանցամատյանում, սակայն վերջինս հրաժարվել է կատարել համապատասխան գրառում: Թիվ 21/05 տեղամասում գտնվող դիտորդը նկարահանել է ողջ ընթացքը: Տեսագրությունը կտրամադրվի ավելի ուշ:

21/05 տեղամասում տեղեկանքը այդպես էլ չի տրամադրվել դիտորդին և առաջարկել են լուսանկարել:


31/49 տեղամասում տրամադրել են (ուշացումով), խնդիրը լուծվել է, որի վերաբերյալ Կազմակերպությունը 04.04.2017թ. կայքով համապատասխան հայտարարություն է տարածել:

10. Չորոշմավորված ծրարների վրա փակցվել է դրոշմանիշ հաշվարկի ժամանակ

Կազմակերպության դիտորդը ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի թիվ 14/20 տեղամասում հայտնաբերել է, որ ընտրություններն ավարտված հայտարարելուց՝ ժամը 20:00-ից հետո, արդյունքների ամփոփման ժամանակ 14/20 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի՝ Վարդան Մելքոնյանի պարտադրանքով թվով 104 անվավեր քվեաթերթիկներ դարձվել են վավեր: Թվով 104 քվեաթերթիկների վրա՝ քվեատուփի գցելու պահին առկա չեն եղել ծրարի կտրվածքից դրված դրոշմանիշներ: Հանձնաժողովի նախագահի և անդամների համաձայնությամբ դրանք քվեաթերթիկների վրա դրվել են հաշվարկի ընթացքում:

11. Տեղամասային հանձնաժողովի արձանագրության մեջ ջնջումներով թվերի փոփոխություն.

Կազմակերպության դիտորդը 2017թ. ապրիլի 2-ին ՀՀ Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի թիվ 1 տարածքային ընտրական հանձնաժողովում հայտնաբերել են քվեարկության արդյունքների կեղծման դեպքեր, մասնավորապես՝ թիվ 1 տարածքային ընտրական հանձնաժողովի աշխատակիցները, ստանալով Նոր Նորք վարչական շրջանի տեղամասերի քվեարկության արդյունքների արձանագրությունները, շտրիխի միջոցով ջնջել են կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների դիմաց լրացված թվերը և լրացրել այլ թվեր:



## Բողոքներ / առաջարկություններ Տեղամասային ընտրական հանձնաժողովներին և ԿԸՀ-ին

1. Դիմում/բողոք թիվ 14 տարածքային ընտրական հանձնաժողովին՝ թիվ 14/10 տեղամասային հանձնաժողովի գործողությունների վերաբերյալ:

Ինքնուրույն քվեարկությանը մասնակցելու հնարավորություն չունեցող անձին օգնող քաղաքացու վերաբերյալ տվյալները չեն արձանագրվել թիվ 14/10 տեղամասային հանձնաժողովի կողմից, դիտորդը պահանջել է, որ խախտման վերաբերյալ իր գնահատականն արձանագրվի գրանցամատյանում, հանձնաժողովի նախագահը մերժել է դիտորդի պահանջը:

Բողոքը ներկայացվել է դիտորդի անունից՝ ներկայացուցչի միջոցով:

2. Դիմում/բողոք թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովին՝ թիվ 28/20 տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունների դեմ:

Դիտորդը 2017 թվականի ապրիլի 2-ին ՀՀ Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի թիվ 28/20 տեղամասում կարճաժամկետ դիտորդական առաքելություն իրականացնելու ժամանակ դիտորդը հայտնաբերել է, որ տվյալ տեղամասային հանձնաժողովը ընտրության կարգի խախտում է թույլ տվել, մասնավորապես՝ յուրաքանչյուր կուսակցության քվեաթերթիկները տարբեր ժամանակահատվածում են վերջացել և առանց հաշվարկելու՝ կրկին ավելացվել են:

Վերոնշյալ դիտարկման կապակցությամբ տեղեկացրել են հանձնաժողովի նախագահին, սակայն վերջինս որևէ գործողություն չի ձեռնարկել:

Դիտորդը Հանձնաժողովի նախագահին առաջարկել է արձանագրել գնահատականը գրանցամատյանում, սակայն վերջինս հրաժարվել է:

Տարածքային ընտրական հանձնաժողովից խնդրվում է.


Հանձնարարել տեղամասային ընտրական հանձնաժողովին գրանցել դիտորդի գնահատականը տեղամասային հանձնաժողովի գրանցամատյանում:

3. Առաջարկություն թիվ 22 տարածքային ընտրական հանձնաժողովին

Թիվ 22/34 տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեասենյակում առկա են ընտրողների կուտակումներ, հանձնաժողովի նախագահը միջոցներ չի ձեռնարկում քվեասենյակում ապահովելու ընտրողների հոսքը, թույլ չտալու կուտակումները և քվեասենյակում 15 ընտրողից ոչ ավել գտնվելու կարգի պահպանությունը, առաջարկվում է հանձնարարել նախագահին՝ պահպանել ՀՀ ընտրական օրենսգրքի 65-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

4. Թիվ 29 տարածքային ընտրական հանձնաժողովին.


Թիվ 29/45 տեղամասում համայնքի ղեկավար Առաքել Վիրաբյանը հանդես է գալիս դիտորդի կարգավիճակով, որի՝ տեղամասում գտնվելը հոգեբանական ճնշում կարող է հանդիսանալ ընտրողների վրա և վերջինս կարող է ուղղորդել ընտրողներին, ուստի՝ առաջարկվում է հեռացնել համայնքի ղեկավարին ընտրական տեղամասից:



5. Առաջարկություն ԿԸՀ-ին

Թիվ 16/15 ընտրական տեղամասում արձանագրվել է, որ ՀՀԿ քվեաթերթիկների ներքևի ձախ մասում առկա է ավելորդ նշում՝ անկյունագծի տեսքով: Նման դեպք է արձանագրվել նաև թիվ 9/25 տեղամասում մեկ այլ քվեաթերթիկի վրա (թիվ 5):

Առաջարկվում է ստուգել և պարզել ՀՀ ամբողջ տարածքում նման դեպքերի առկայությունը և ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ տեղամասերին տրամադրել նոր քվեաթերթիկներ:




## Հայցադիմում ՀՀ վարչական դատարան

Թիվ 14/10 տեղամասային հանձնաժողովի կողմից մերժվել էր միևնույն անձի կողմից ընտրելու հնարավորություն չունեցող ընտրողներին երեք անգամ օգնելու վերաբերյալ դիտորդի գնահատականը արձանագրելու պահանջը, ինչպիսի անգործությունը վիճարկվել էր դիտորդի կողմից թիվ 14 տարածքային ընտրական հանձնաժողովում:

07.04.2017թ-ին թիվ 7-Ա որոշմամբ տարածքային ընտրական հանձնաժողովը մերժել է դիտորդի բողոքը:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի և դիտորդի կողմից հայց է ներկայացվել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ թիվ 14/10 տեղամասային ընտրական հանձնաժողովի և թիվ 14 տարածքային ընտրական հանձնաժողովի, որով վիճարկվում է տեղամասային հանձնաժողովի անգործությունը և տարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը:



## Անփութում

Այս պահին ընթացքի մեջ է գտնվում.

- 11 հանցագործության մասին հաղորդում,
- 1 հայցադիմում ՀՀ վարչական դատարանում,

4 գործով կազմվում է հայցադիմում, որոնցով ընդհանուր հայցային վարույթի շրջանակներում կվիճարկվեն ընտրական հանձնաժողովների կողմից Կազմակերպությանը պատշաճ պատասխան չտրամադրելու հետ կապված գործողությունները (անգործությունը):

*«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի հիմնադիր անդամներն են  
Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ  
Իրազեկ քաղաքացիների միավորում*

*Մարտունու կանանց համայնքային խորհուրդ  
Գորիսի մամուլի ակումբ կազմակերպությունները*

Twitter: @IndObserverArm

Facebook: @Անկախ դիտորդ - Independent Observer

E-mail: independentobserverarm@gmail.com

Hotline: 0 8000 12 11